լութեամբ երկոցունց, այլ ոչ գաղտնի և դաւաճանութեամբ, և եթէ նախատօղն զղջասցի և դոչէ մեղայ նախատեցեալն պարտ է թողուլ նմայ, և եթէ 'ի պատճառէ այսպիսի վրէժխնդրութեան մինն մեռցի 'ի ձեռանէ միւսոյն նա որ կենդանի մնացեալ մեռցի ըստ Օրինօք հրամանաւ դատաստանի։

ԳԼՈՒԽ ՅԽԳ.

Սովորութիւն եթէ գիշեր և եթէ ցերեկապահ զօրաց լինիցի, զի որում գունտ զօրաց որ լինիցի իբր երկու հազար և մին հարիւր զինուորք, որ 'ի սոցանէ մին հազար և չորս հարիւր հեռեակք և եօթն հարիւր այր և ձիոյ, պարտ է սոցա երիս բաժինս առնել, իւրաքանչիւր զօրագլխօք, մի 'ի երից բաժնի որ համարի իբր եօթն հարիւր զինուորք, որում չորս հարիւր վաթսուն և վեց 'ի սոցանէ հեռեակ, և երկու հարիւր երեսուն և չորս այր և ձի, սոքայ 'ի երից աւուր մի անգամ լինիցին պահակ բաժանեալ 'ի հարկաւոր տեղիս և միւս մի բաժին եօթն հարիւր զինուորք 'ի տեղի և բնակութեան պատրաստականի ընդ զէնս պատրաստ, մնացորդ եօթն հարիւր զինուորս 'ի գործս իւրեանց և զբօսանս, այսպէս խաղալով որ 'ի ամենայն մի մասն 'ի միջի երից աւուրց մի անգամ տքնիցէ պահակութեամբ, մի աւուր պատրաստ 'ի տեղ պատրաստութեան և միւս աւուր 'ի զբօսանս։